

Հավելված

Հաստատված է

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2011 թվականի մայիսի 24-ի թիվ 156-Ն որոշմամբ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 10/09

**ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԵՐԻ ՓԱՅԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ
ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՓԱՅԵՐ ՁԵՌՔ
ԲԵՐԵՈՒԻ ԿԱՐԳԸ
(վերնագիրը փոխ. 15.07.14թ. թիվ 185 Ն)**

ԳԼՈՒԽ 1. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Սույն կանոնակարգը սահմանում է պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի փայերի թողարկման ընթացակարգի նկատմամբ պահանջները և պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ակտիվների կառավարչի սեփական միջոցներից ներդրումները փայերի վերածման և փայերի մարման կարգը:

2. Սույն կանոնակարգում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.

- 1) **Կենտրոնական բանկ՝** Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ,
- 2) **Օրենք՝** «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք,
- 3) **Ֆոնդ՝** պարտադիր կենսաթոշակային ֆոնդ,
- 4) **մասնակից՝** ֆոնդի մասնակից:

3. Սույն կանոնակարգում օգտագործվող այլ հասկացություններն ունեն «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով կիրառվող նշանակությունը:

ԳԼՈՒԽ 2. ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԵՐԻ ՓԱՅԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

4. Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով յուրաքանչյուր անձի համար (օգտին) կատարված կուտակային հատկացման դիմաց տվյալ անձի կենսաթոշակային հաշվին ֆոնդի փայերի փոխանցումը կատարվում է՝ հիմք ընդունելով տվյալ ֆոնդի փայի՝ սույն կանոնակարգի **Error! Reference source not found.**-րդ կետի համաձայն մասնակիցների ռեեստրը վարողին տրամադրված եւ հրապարակված վերջին հայտնի տեղաբաշխման գինը:

(4-րդ կետը փոխ., լրաց. 10.12.13թ. թիվ 280 Ն, փոխ. 15.07.14թ. թիվ 185 Ն)

5. Եթե Օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված միջոցները մասնակիցների ռեեստրը վարողի՝ Կենտրոնական բանկում բացված հաշվին փոխանցելու օրվա դրությամբ մասնակցի կողմից դեռևս չի կատարվել ֆոնդի ընտրություն, փայերի փոխանցումը կենսաթոշակային հաշիվներին կատարվում է սույն կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերին համապատասխան:

(5-րդ կետը փոխ. 15.07.14թ. թիվ 185 Ն)

6. Եթե Օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված տեղեկատվության հիման վրա մասնակցի համար կենսաթոշակային հաշիվ բացելուց հետո մասնակիցը 30 օրվա ընթացքում մասնակիցների ռեեստրը վարողին ներկայացնում է ֆոնդի ընտրության դիմում (սույն գլխում այսուհետ՝ Դիմում), մասնակիցների ռեեստրը վարողը փայերի փոխանցումը անձի կենսաթոշակային հաշվին կատարում է՝ հիմք ընդունելով սույն կանոնակարգի 4-րդ կետով նախատեսված՝ տվյալ ֆոնդի փայի տեղաբաշխման գինը:

(6-րդ կետը փոխ. 15.07.14թ. թիվ 185 Ն)

7. Եթե Օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված տեղեկատվության հիման վրա մասնակցի համար կենսաթոշակային հաշիվ բացելուց հետո 30 օրվա ընթացքում մասնակիցը մասնակիցների ռեեստրը վարողին չի ներկայացնում Դիմում, մասնակիցների ռեեստրը վարողը 30-օրյա ժամկետի ավարտից հետո, սակայն ոչ ուշ, քան հաջորդող առաջին աշխատանքային օրը.

- 1) Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով անձի համար կատարում է ֆոնդի ընտրություն,
- 2) յուրաքանչյուր անձի համար (օգտին) կատարված կուտակային հատկացման դիմաց տվյալ անձի կենսաթոշակային հաշվին է

փոխանցում սույն կետի 1-ին ենթակետին համապատասխան ընտրված ֆոնդի՝ կուտակային վճարին համարժեք քանակով փայեր՝ հիմք ընդունելով տվյալ ֆոնդի փայի վերջին հայտնի (սույն կանոնակարգի 8-րդ կետի համաձայն մասնակիցների ռեեստրը վարողին տրամադրված և հրապարակված) տեղաբաշխման գինը,

- 3) անձի համար (օգտին) կատարված կուտակային հատկացմանը համարժեք գումարը փոխանցում է համապատասխան ֆոնդի պահառուի նշած հաշվին,
- 4) յուրաքանչյուր ֆոնդի կառավարչին ներկայացնում է տեղեկատվություն՝ սույն կետի 3-րդ ենթակետի համաձայն կենսաթոշակային հաշիվներին փոխանցված համապատասխան ֆոնդի փայերի քանակի և սույն կետի 2-րդ ենթակետի համաձայն փոխանցված գումարի վերաբերյալ՝ առանց բացահայտելու ընտրություն կատարած մասնակիցներին:

(7-րդ կետը փոխ., խմբ. 10.12.13թ. թիվ 280 Ն, փոխ. 15.07.14թ. թիվ 185 Ն)

8. Ֆոնդի կառավարիչը յուրաքանչյուր աշխատանքային օր հաշվարկում և մինչև հաջորդ աշխատանքային օրվա ժամը 15:00-ը մասնակիցների ռեեստրը վարողին է տրամադրում իր կողմից կառավարվող յուրաքանչյուր ֆոնդի փայի հաշվարկային արժեքը, տեղաբաշխման և հետգնման (մարման) գները: Մասնակիցների ռեեստրը վարողը ֆոնդի փայի հաշվարկային արժեքը, տեղաբաշխման և հետգնման (մարման) գները կառավարչից ստանալուց հետո դրանք անմիջապես հրապարակում է իր ինտերնետային կայքում: Կառավարիչը սույն կետի համաձայն մասնակիցների ռեեստրը վարողին տրամադրված տեղեկատվությունը մասնակիցների ռեեստրը վարողին տրամադրելուց հետո, սակայն ոչ ուշ, քան տվյալ աշխատանքային օրվա ավարտը հրապարակում է իր ինտերնետային կայքում: «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հրապարակման պահանջը համարվում է պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարչի կողմից կատարված նաև սույն կետով սահմանված կարգով մասնակիցների ռեեստրը վարողին փայերի գների տրամադրման և մասնակիցների ռեեստրը վարողի կողմից այդ գների հրապարակման դեպքում:

(8-րդ կետը խմբ. 10.12.13թ. թիվ 280Ն, փոխ. 28.04.17թ. թիվ 100Ն)

9. (9-րդ կետը ուժը կորցրել է 10.12.13թ. թիվ 280 Ն)

10. Ֆոնդի փայի հաշվարկային արժեքը, տեղաբաշխման և հետգնման (մարման) գները կլորացվում են ստորակետից հետո չորս նիշի ճշտությամբ (գները կարող են հրապարակվել ստորակետից հետո երկու նիշի ճշտությամբ):

(10-րդ կետը լրաց. 15.07.14թ. թիվ 185 Ն)

11. Ֆոնդի փայերի քանակը կլորացվում է ստորակետից հետո վեց նիշի ճշտությամբ:

12. Կուտակային հատկացումները և փայերի հետգնման (մարման) ժամանակ կատարվող վճարները կլորացվում են ստորակետից հետո երկու նիշի ճշտությամբ:

(12-րդ կետը փոխ. 15.07.14թ. թիվ 185 Ն)

13. (13-րդ կետը ուժը կորցրել է 10.12.13թ. թիվ 280 Ն)

14. Մասնակցից փայերի փոխանակման դիմում ստանալու դեպքում մասնակիցների ռեեստրը վարողը անհապաղ տեղեկացնում է ֆոնդի կառավարչին, որի կողմից կառավարվող ֆոնդի փայերի փոխանակման համար ներկայացվել է դիմումը՝ տեղեկացնելով փոխանակման ենթակա փայերի քանակի մասին:

**ԳԼՈՒԽ 3. ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ ԿՈՂՄԻՑ
ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՓԱՅԵՐԸ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ԵՎ
ՄԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ**

(վերնագիրը փոխ. 15.07.14թ. թիվ 185 Ն)

15. Ֆոնդի կառավարչի մասնակցության չափը ֆոնդում որոշվում է ֆոնդի կառավարչին պատկանող ֆոնդի փայերի քանակի և տվյալ ֆոնդի տեղաբաշխված ու հետ չգնված բոլոր փայերի քանակի հարաբերակցությամբ:

16. (16-րդ կետը ուժը կորցրել է 10.12.13թ. թիվ 280 Ն)

17. Ֆոնդի կառավարչի՝ իր կողմից կառավարվող ֆոնդի փայեր ձեռք բերելու համար վճարումը ստանալուց անմիջապես հետո, սակայն ոչ ուշ, քան 1 աշխատանքային օրվա ընթացքում մասնակիցների ռեեստրը վարողը ֆոնդի կառավարչի հաշվին է փոխանցում փայերի ձեռք բերման դիմումում նշված ֆոնդի փայերը:

(17-րդ կետը փոխ. 10.12.13թ. թիվ 280 Ն)

18. Ֆոնդի կառավարչին փոխանցվող սույն կանոնակարգի 17-րդ կետով

նախատեսված փայերի քանակը որոշվում է հիմք ընդունելով փայերի՝ սույն կանոնակարգի 8-րդ կետի համաձայն մասնակիցների ռեեստրը վարողին տրամադրված եւ հրապարակված վերջին հայտնի տեղաբաշխման գինը:

(18-րդ կետը փոխ. 10.12.13թ. թիվ 280 Ն)

19. Մասնակիցների ռեեստրը վարողը ֆոնդի կառավարչի հաշվին սույն կանոնակարգի 17-18-րդ կետերի համաձայն փայերը փոխանցելուց հետո ոչ ուշ, քան 1 աշխատանքային օրվա ընթացքում ֆոնդի կառավարչին ներկայացնում է տեղեկատվություն՝ սույն կանոնակարգի 17-րդ կետի համաձայն ֆոնդի կառավարչի հաշվին փոխանցված ֆոնդի փայերի քանակի և տեղաբաշխման գնի վերաբերյալ:

(19-րդ կետը փոխ. 10.12.13թ. թիվ 280 Ն)

20. Մասնակիցների ռեեստրը վարողը ֆոնդի կառավարչից՝ իր կողմից կառավարվող ֆոնդի փայերը հետգնելու (մարելու) դիմում ստանալու դեպքում 10 աշխատանքային օրվա ընթացքում կազմակերպում է ֆոնդի փայերի հետգնումը (մարումը) և հետգնման (մարման) արդյունքում ստացված միջոցների վճարումը:

(20-րդ կետը փոխ. 12.10.13թ. թիվ 280 Ն)

21. (21-րդ կետը ուժը կորցրել է 10.12.13թ. թիվ 280 Ն)

22. (22-րդ կետը ուժը կորցրել է 10.12.13թ. թիվ 280 Ն)

23. Սույն կանոնակարգի 20-րդ կետով նախատեսված դեպքում փայերի հետգնում (մարում) կատարվում է՝ հիմք ընդունելով տվյալ ֆոնդի փայի՝ դիմումը ներկայացնելու պահի դրությամբ սույն կանոնակարգի 8-րդ կետի համաձայն մասնակիցների ռեեստրը վարողին տրամադրված և հրապարակված վերջին հայտնի հետգնման (մարման) գինը:

(23-րդ կետը խմբ. 12.10.13թ. թիվ 280 Ն)

24. (24-րդ կետը ուժը կորցրել է 10.12.13թ. թիվ 280 Ն)

25. Ֆոնդի կառավարչի լիցենզիան ուժը կորցրած ճանաչվելու, լուծարման կամ ֆոնդի կառավարումն այլ անձի փոխանցելու դեպքում ֆոնդի կառավարչին պատկանող՝ իր կողմից կառավարվող ֆոնդի փայերի հետգնումն իրականացվում է սույն գլխի դրույթներին համապատասխան: